ՍԻՎՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Լուսինե Զաքարյանի հիշատակին

Խորանի առջև, Ատվածամոր դեմ
Սպիտակ մի մոմ՝ խոշոր ու վերձիգ,
Սպիտակ մի մոմ կայծկլտում է մեղմ —
Սպիտակ հագած փխրուն մի աղջիկ:

Ու մոմի ծայրին՝ բոցի փոխարեն,
Լույսի փոխարեն ձայն է թրթռում
Հալիլվող մոմից «Սուրբ-սուրբ» է ծորում,
Պահ առ պահ հատնում, այրում ինքն իրեն:

Դրսում զանգերն են ղողանջում տխուր,
Մայր Էջմիածնից մինչև Գանձասար,
Ծունկը է իջել ու խունկ է ծխում
Աղոթքով լցված մի հայ ներաշխարհ.

Տե՛ր, ընդունելի՞ արա մեր զոհը,
Տե՛ր, քե՞զ է մնում մեր բախտը ու մենք.
Վառել ենք քո դեմ մեր վերջին մոմը,
Դրանից մաքուր էլ ոչինչ չունենք...

22.01.1993 թ.